ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՌԱԶՄԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐՍԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀՀ-ՈՒՄ

ԴԻԱՆԱ ՄԱՐԿՈՍՅԱՆ,

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Էլ. հասցե՝ *markosyandiana45@aspu.am*

DOI: 10.24234/scientific.v1i44.46

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածի նպատակը պատերազմական իրավիճակում և ռազմաճակատի գոտում լրագրողի մասնագիտական աշխատանքի արդյունավետության բարձրացմանն ու ռիսկերի նվազեցմանն ուղղված երաշխավորությունների մշակումն է, որոնք առնչվում են ռազմական լրագրողների պատրաստման և վերապատրաստման հիմնախնդիրներին: Հոդվածում ներկայացրել ենք ժամանակակից պատերազմներում, մասնավորապես Արցախի և ՀՀ-ի դեմ 2020 թվականին Ադրբեջանի սանձազերծած պատերազմի ընթացքում լրագրողների մասնագիտական աշխատանքի առանձնահատկությունները, լրագրողներին ներկայացվող պահանջների, դրսևորումների փոփոխությունները 2016 թվականի ապրիլյանի համեմատ: Պատերազմական իրավիճակում և ռազմաճակատի գոտում լրագրողի աշխատանքում ռիսկերի նվազեցման նպատակով մեր մշակած երաշխավորությունները հիմնված են պատերազմի ընթացքում լրագրողական աշխատանք կատարած մասնագետների փորձի և մեր աշխատանքի վերլուծության վրա:

Բանալի բառեր՝ ռազմական լրագրող, հիբրիդային պատերազմ, տեղեկատվական անվտանգություն, տեղեկատվական հոսքեր, անվտանգային միջոցառումներ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հոդվածում ներկայացվում են պատերազմական իրավիճակներում լրագրողների մասնագիտական աշխատանքի առանձնահատկությունները: Ձեռք բերված տվյալների հենքի վրա վերլուծվում են մարտադաշտում ռազմական լրագրողների գործունեության մանրամասները, տրվում նրանց վերապատրաստելու երաշխավորություններ: Այստեղից էլ, լրագրողների վերապատրաստումը հույժ անհրաժեշտ է, քանզի պատերազմող երկրի համար այդպիսի մասնագետների աշխատանքն էական և ուղղորդիչ նշանակություն ունի: Այս առումով, կարծում ենք, լրագրողներ պատրաստող բուհերը բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում առավելագույն առարկայացանկ պիտի ներառեն՝ ռազմական լրագրողի մասնագիտական նկարագիրը բարձր պատրաստվածության հասցնելու ուղղությամբ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Որպես հիմնախնդրի ուսումնասիրման տեսական մոտեցումներ, սկզբունքներ, պատճառականություն և ուսումնասիրման մեթոդների համակարգ՝ դիտարկվել են վերլուծահամադրական մեթոդները: Օգտագործվել են նաև տեղեկատվական առկա նյութերի ուսումնասիրման և իրողությունների հետ համադրման մեթոդները:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ռազմական լրագրողի մասնագիտությունն առանձնահատուկ է, այն համարվում է ամենավտանգավորներից մեկը, քանի որ լրագրողի աշխատանք իրականացնող մասնագետներից ամենաշատը զոհվում են հենց ռազմական հակամարտությունների գոտում աշխատողները:

Այդ աշխատանքի համար անհրաժեշտ է առավելագույն դիմացկունություն, խիզախություն, սառը դատողություն, անկողմնակալություն, փաստերի ճշգրտման կարողություն, առավելագույն արդարացիություն և ճշմարտացիություն, հավասարակշռություն ցանկացած կոնֆլիկտի լուսաբանման հարցում. չէ՞ որ յուրաքանչյուր հակամարտություն ոչ միայն տառապանք է հակամարտող կողմերի համար, այլև ֆեյք լուրեր, զեղծարարություններ ու մանիպուլյացիա: Ստահոդ լուրերի և կեղծ օգտատերերի միջոցով ապատեղեկատվություն տարածելը ոչ թե լրագրություն է, այլ անբարեխիղճ քարոզչություն, որի զոհ կարող են դառնալ

բազմաթիվ անմեղ մարդիկ:

Այսօր 21-րդ դարում դասական լրագրությունը, կարելի է ասել, մարում է: Լրագրությունը հասարակությանը պաշտպանող, վերահսկող իր գործառույթից շեղվել է՝ վերածվելով զանգվածային ոչնչացման զենքի: Մենք գործ ունենք հիբրիդային պատերազմների հետ, որոնք տեղափոխվել են մեդիա հարթակ:

«Հիբրիդային պատերազմ»-ը ԱՄՆ-ում 20-րդ դարի վերջին ի հայտ եկած ռազմական ստրատեգիայի ոլորտում կիրառվող հասկացություն է, որն իր մեջ, որպես մի ամբողջություն, ընդգրկում է սովորական պատերազմը, փոքր պատերազմը, կիբերպատերազմը, միջուկային, կենսաբանական և քիմիական զենքերի, տեղեկատվական պատերազմի միջոցների կիրառմամբ գործողությունները (Fridman, 2018):

«Հիբրիդային» եզրույթը նշանակում է հակառակորդի վրա ճնշման մի քանի տեսակների կիրառում (տեղեկատվական-գաղափարական, ֆինանսատնտեսական և այլն), որոնց շարքում զինված ուժերի գործողությունները կազմում են թեև կարևոր, բայց ընդամենը մի մասը (Панарин, 2022): Վերջին տարիներին հրապարակվեցին մի շարք աշխատություններ և՛ էլեկտրոնային, և՛ տպագիր տարբերակներով, որոնք վերաբերում են հիբրիդային պատերազմին, վերջինիս իրականացման ձևերին, կանոններին, սկզբունքներին, մեթոդաբանությանը, մեխանիզմներին (Thiele R., 2021; Mikael N., 2021; Radin, 2017):

Այսօր զինված հակամարտությունների լուծման պատմականորեն նոր այդ մոտեցումը պատերազմի առաջատար տեսակներից է:

Եվրոպական շատ վերլուծաբանների կարծիքով հիբրիդային պատերազմը թշնամական գործողությունների մի տեսակ է, որի դեպքում հարձակվող կողմը չի դիմում դասական ներխուժման, այլ իր հետ հակամարտության մեջ գտնվող կողմին ոչնչացնում է՝ համակցելով քայքայիչ գործողությունները, սաբոտաժը, կիբերպատերազմը:

Հիբրիդային պատերազմի նպատակը ոչ ռազմական միջոցներով հակառակորդի թիկունքը թուլացնելն է, ինչով էլ այն նպաստում է առաջին գծում զինված ուժերի հաղթանակին: Այս իմաստով, ամենաարագ զարգացող և արդյունավետ գործիքներից է տեղեկատվական պատերազմը, որն ունի իր

օրինաչափությունները, օրենքներն ու սկզբունքները, որոնց մասին հետաքրքիր վերլուծություն է ներկայացրել պահեստազորի գնդապետ, ռազմական գիտությունների թեկնածու Ա. Ա. Բարտոշը (Бартош, 2022):

Հիբրիդային պատերազմի պայմաններում արտաքին ագրեսիայի ժամանակ հատկապես կարևոր է երկրների տեղեկատվական իմունիտետը, որի ամենակարևոր բաղկացուցիչներից մեկը լրատվամիջոցների պատասխանատվությունն ու համակարգված գործունեությունն է քաղաքական իշխանության վստահելի, պատկան մարմինների հետ: Եվ այս պարագայում էլ սահմանը շատ նուրբ է, ու անհրաժեշտ է անչափ զգուշավոր լինել, այլապես կարելի է հայտնվել հակառակ ծայրահեղության մեջ:

Երկրորդ կարևոր գործոնը՝ հասարակության վստահությունն է իշխանության, այդ թվում՝ չորրորդ իշխանության նկատմամբ, որի բացակայությունը կարող է հանգեցնել այլ աղբյուրներում տեղեկատվության որոնման, արդյունքում՝ թշնամական քարոզության ճիրաններում հայտնվելու իրական վտանգի: Եվ երրորդ՝ մեդիագրագիտությունը:

Այս իմաստով, հսկայական փորձության միջով անցան հայ և օտարազգի լրագրողները 2020 թվականի սեպտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 10-ը՝ Արցախյան երկրորդ պատերազմի առաջին կրակոցներից՝ մինչև հրադադարի կնքման համատեղ հայտարարությունը:

Թնդանոթային առաջին համազարկերը, որ հնչեցին 2020 թվականի սեպտեմբերի 27-ի վաղ առավոտյան, գուժում էին Ադրբեջանի լայնամասշտաբ հարձակման մասին՝ հայ-ադրբեջանական շփման գծի ամբողջ երկայնքով՝ հրադադարի հաստատումից հետո առաջին անգամ հրթիռակոծելով Լեռնային Ղարաբաղի բոլոր խոշոր քաղաքները, ներառյալ մայրաքաղաք Ստեփանակերտը:

Այս հարձակումը խիստ անակնկալ էր, եթե ոչ քաղաքական ու ռազմական ղեկավարության, ապա առնվազն հասարակության և լրագրողների համար:

Լրագրողական շրջանակներում, ըստ էության, սերնդափոխություն էր տեղի ունեցել և 90-ականների պատերազմը լուսաբանած և այդ պատերազմի բովով անցած լրագրողները վաղուց դաշտում չէին, իսկ նոր սերնդի որոշ լրագրողներ լուսաբանեցին 2016 թվականի ապրիլյան քառօրա ռազմական գործողությունները:

Այդ օրերին լրագրողները հիմնականում օգտվում էին պաշտոնական աղբյուրներից, և ավելի քիչ էին դեպքի վայրից ռեպորտաժներ պատրաստում, իսկ բախումներն էլ տեղային բնույթ ունեին:

Այս անգամ իրավիճակն այլ էր: Հենց առաջին օրը ՀՀ իշխանությունը հայտարարեց ռազմական դրություն Հայաստանում և Արցախում, որով էականորեն սահմանափակեց տեղեկատվության տարածման իրավունքը՝ այն վերապահելով պետական պատկան մարմիններին:

Ռազմական դրության մասին ՀՀ կառավարության համապատասխան որոշման հավելվածով սահմանվեցին ռազմական դրության ժամանակ կիրառվող միջոցառումները, իրավունքների ու ազատությունների ժամանակավոր սահմանափակումները, ռազմական դրության իրավական ռեժիմն ապահովող միջոցները և մարմինները: Այդ հավելվածի 4-րդ կետը վերաբերում էր հրապարակումների, հաղորդումների իրականացման սահմանափակումներին, մասնավորապես՝ «Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում տեղի ունեցող մարտական գործողությունների, դրանց ուղղությունների, մարտական տեխնիկայի շարժի, մարտական գործողությունների արդյունքում պատճառված կորուստների և վնասների վերաբերյալ հրապարակումների, տեղեկատվական նյութերի, հարցազրույցների, հաղորդումների և դրանց հետ անմիջականորեն առնչվող այլ տեղեկությունների հրապարակային տարածումը, փոխանցումը, ներառյալ ինտերնետային կայքերում և սոցիալական ցանցերում դրանց հրապարակումների ձևով կատարվում է բացառապես պետական մարմինների կողմից տրամադրված պաշտոնական տեղեկատվության հղումով»: Հատկանշական է, որ այդ սահմանափակումները չէին կիրառվում պետական պաշտոնատար անձանց հաղորդումների կամ նրանց հաղորդումներին կատարված հղումների նկատմամբ (*Ուղեցույց պատերազմի, զինված բախումների և ներքին հակամարտությունների ժամանակ լրագրողների ու լրատվամիջոցների վարքի,* 2017):

Սրանով, փաստորեն, ամբողջությամբ փորձ արվեց ՀՀ-ում վերահսկողության տակ վերցնել լրատվական դաշտը: Պատերազմի առաջին կեսին այս քաղաքականությունը լրատվական դաշտում և հասարակության մոտ

դժգոհություններ չառաջացրեց: Եվ այդպես կլիներ, եթե հայկական կողմը պատերազմում հաղթեր:

Սակայն պատերազմի ավարտին ավելի մոտ և հատկապես 2020թ. նոյեմբերի 9-ի ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի ստորագրած եռակողմ հայտարարության հրապարակումից հետո հանրությունը և լրատվամիջոցները արձանագրեցին նման քաղաքականության ոչ բարենպաստ հետևանքները: Հատկապես ծանր կացության մեջ հայտնվեց պետական քարոզչությունն իրականացնող առանցքային, երևացող դեմքը՝ ՊՆ ներկայացուցիչ Արծրուն Հովհաննիսյանը, որն ամեն օր Միասնական տեղեկատվական կենտրոնից լուրեր էր հաղորդում ռազմադաշտում տիրող իրավիճակից: Ինչպես հետո պիտի պարզվեր, ոչ այնքան հավաստի, երբեմն հատուկ նպատակով արվող՝ մարտական ոգին բարձրացնող, բայց արդյունքում խոր հիասթափություն և հասարակական դժգոհություն առաջացրած քաղաքականություն, որի ազդեցությունը պատերազմի արդյունքի վրա դեռ պիտի խորապես ուսումնասիրվի: Տեղեկատվական կենտրոն էր ստեղծվել նաև Արցախում: Բացի այս երկու տեղեկատվական աղբյուրներից, պատերազմի ողջ ընթացքում տեղեկատվական հիմնական աղբյուրներն էին՝ Հայաստանի Հանրապետության վարչապետը, Արցախի նախագահը, Հայաստանի պաշտպանության նախարարության ներկայացուցիչը, Արցախի Մարդու իրավունքների պաշտպանը, Արցախի նախագահի և ՊՆ խոսնակները:

Ըստ ռազմական դրության ժամանակ գործող կարգի՝ ԶԼՄ-ները պարտավոր էին հաղորդել միայն պաշտոնական տեղեկատվություն, սակայն շատ հաճախ վերը թվարկված պաշտոնյաների հայտնած տեղեկությունները հակասական էին, երբեմն, անգամ՝ իրարամերժ: Իսկ երբ սկսեցին պատերազմի դաշտից վիրավորներ տեղափոխել մայրաքաղաք, որոնք նկարագրում էին իրական վիճակը, հասարակության մոտ առաջացավ կոգնիտիվ դիսոնանս, առկա պաշտոնական տեղեկատվության և ականատեսների պատմությունների բախում, որը, սակայն, պատերազմի պասիվ մասնակիցներին ուղղորդեց դեպի թշնամական՝ ադրբեջանական, և մասամբ՝ ուկրաինական տեղեկատվական աղբյուրներ:

Հայաստանյան լրատվամիջոցները, ըստ էության, զրկված էին

ադրբեջանական կայքերից օգտվելու հնարավորությունից՝ որպես սկզբնաղբյուր պարտադրաբար ունենալով բացառապես ՀՀ իշխանական աղբյուրներով տրվող տեղեկությունները՝ այսպիսով որոշ չափով հայտնվելով տեղեկատվական շրջափակման մեջ (*Ուղեցույց պատերազմի, զինված բախումների և ներքին հակամարտությունների ժամանակ լրագրողների ու լրատվամիջոցների վարքի* 2017):

Աստիճանաբար հայկական տեղեկատվական դաշտը սկսեց նաև հրապարակել այլընտրանքային տեղեկատվություն՝ վերածվելով հակառակորդի կազմալուծող, կազմաքանդող գործողությունների համար շատ հարմար հարթակի, որն այդ կերպ բավական արդյունավետորեն իրականացրեց իր խնդիրը՝ հայաստանյան հասարակության մեջ խուճապ ու հուսահատություն տարածելով: Չափազանց բացասական նշանակություն ունեցան սոցիալական ցանցերը, որոնցում ևս հակառակորդն իրականացնում էր տեղեկատվական պատերազմ: Անգամ ադրբեջանցի օգտատերեր՝ հայկական անուն-ազգանուններով, խնամքով պատրաստված պրոֆայլներով, գրագետ հայերենով խուճապ էին տարածում: Սրանք, իրապես, հակառակորդի հատուկ ծառայությունների վերահսկողության ներքո էին իրականացվում: Ադրբեջանում սահմանափակված էր ոչ միայն սոցիալական ցանցերի, այլև այսպես կոչված, անկախ, այլընտրանքային լրատվամիջոցների գործունեությունը: Ադրբեջանի հասարակությունն էլ տեղեկատվություն ստանում էր հայկական, ռուսական և այլ աղբյուրներից: Պատերազմի ողջ ընթացքում Ադրբեջանում արգելափակման տարբեր մեխանիզմներ էին կիրառվում գրեթե բոլոր սոցիալական ցանցերի (Facebook, Youtube, WhatsApp, Tik-tok) նկատմամբ, բացառությամբ որոշակի սահմանափակումներով (Twither):

ՀՀ իշխանությունների տրամադրած տեղեկությունների նկատմամբ անվստահությունն է՛լ ավելի խորացավ պատերազմի ավարտից հետո, երբ ակնհայտ դարձավ, որ ավելի քան 40 օր որպես կարգախոս հռչակված «Հաղթելու ենք»-ը, համանման այլ քարոզչական տերմիններ, և այդ տրամաբանության մեջ իրականացվող պետական տեղեկատվական քաղաքականությունն ընդհանրապես, իրավիճակը ներկայացրել են տրամագծորեն հակառակ կերպ:

Լրագրողներն ակնհայտորեն վերանայեցին ռազմական

գերատեսչությունների հետ իրենց հարաբերությունները: Աստիճանաբար ավելացան պաշտոնական տեղեկությունները ՏԻՄ առաջնորդներից և համայնքների ներկայացուցիչներից ճշտելու դեպքերը: Այսպես, մի կողմից ավելի հստակ էր տեղեկատվությունը, մյուս կողմից ավելի էր ընդգծվում իրարամերժությունը, քանի որ ՏԻՄ առաջնորդներն ավելի անկաշկանդ էին, և համընդհանուր լարվածության և խառնակ իրողության մեջ տալիս էին չհամաձայնեցված, նախապես չմշակված տեղեկատվություն:

Դրան գումարվեց այն, որ իրավիճակին շատ ավելի տեղյակ լրագրողները, որոնք գտնվում էին անմիջականորեն ռազմական գործողությունների վայրերում կամ կարողանում էին շրջանցել համացանցային սահմանափակումներն ու արգելքները և պաշտոնական տեղեկատվությունը համադրել այլ աղբյուրներից ստացված լուրերի հետ, հայտնվեցին խոցելի վիճակում՝ ենթակվելով օրենքի առջև պատասխանատվության:

Ընդհանուր առմամբ, պատերազմի ողջ ժամանակահատվածում ռազմական գործողությունները լուսաբանելու համար Լեռնային Ղարաբաղ են ժամանել միջազգային 290-ից ավելի լրատվամիջոցների ներկայացուցիչներ, ավելի քան 390 անկախ և ԶԼՄ-ների հետ փոխկապակցված լրագրողներ:

2020թ. պատերազմի ընթացքում ադրբեջանական զինուժի հարձակումների հետևանքով ծանր վիրավորում է ստացել 7 լրագրող,այդ թվում՝ օտարերկրյա ԶԼՄ-ների ներկայացուցիչներ, զոհվել է լրագրողներին ուղեկցող մեկ անձ (*Ուղեցույց պատերազմի, զինված բախումների և ներքին հակամարտությունների ժամանակ լրագրողների ու լրատվամիջոցների վարքի*, 2017):

Հատկանշական է, որ այդ բոլոր լրագրողները վիրավորում ստացել են ռազմական ենթակառուցվածքներից և առաջնագծից հեռու, խաղաղ բնակավայրերում իրենց մասնագիտական պարտականություններն իրականացնելիս, իսկ նրանց մեքենաներն ունեցել են PRESS տարբերանշանը: Սա միջազգային իրավունքի տեսանկյունից հանցագործություն է, և անուղղակիորեն ապացուցում է, որ լրագրողների նկատմամբ հարձակումները եղել են թիրախավորված և նպատակային: Պատերազմը լուսաբանող լրագրողներն աշխատել են կյանքի ու մահվան սահմանագծում՝ ամեն պահ գիտակցելով իրենց

զոհվելու հավանականությունը:

Ադրբեջանական զինված ուժերի կողմից Շուշիի Սուրբ Ղազանչեցոց եկեղեցու երկրորդ արկակոծության արդյունքում ծանր վիրավորում է ստացել ռուս ռազմական լրագրող Յուրի Կատենոկը, ում կյանքը հնարավոր եղավ հրաշքով փրկել միայն բժիշկների համառ ջանքերի շնորհիվ: Յուրի Կոտենոկի անձն անքակտելիորեն կապված է Արցախյան երկրորդ պատերազմի հետ՝ ակամա դառնալով այդ պատերազմի խորհրդանիշներից մեկը: Նա հրթիռակոծության տակ մնաց, ոչ ավելի, ոչ պակաս, Շուշիի Ղազանչեցոց տաճարում՝ Սուրբ Ամենափրկչում: Նրան մեծ դժվարությամբ հանեցին փլատակների տակից, և հասցրին հիվանդանոց՝ նախ Ստեփանակերտ, ապա՝ Երևան: «Դժվար է հիշել... Ամեն ինչ աչքիս առաջ է: Տաճարում իմ ամբողջ կյանքն անցավ աչքերիս առջևով: Ես վիրավոր էի, և Քրիստոսի վիրավոր տաճարը հավերժ կմնա իմ սրտում, -www.armmuseum.ru-ին պատմել է Յուրի Կոտենոկը:- Եվ դա բոլորովին պատկերավոր խոսք չէ: Երբ մեռնում ես, զգում ես, որ կյանքը հեռանում է ... (Кочарян М., 2020):

Ադրբեջանական կողմն, ի դեպ, չէր հերքում Արցախում ռազմական գործողությունները լուսաբանող լրագրողների նշանառության տակ պահելու փաստը: Վերջին պատերազմի ընթացքում ոչ միայն մասնագիտական, այլև ԶԼՄ-ների ռազմական գործողությունների պատրաստվածության առումով ակնհայտ դարձան բավականաչափ թերություններ: Պատերազմի սկզբում շատ լրագրողներ ու լրատվամիջոցներ բարձրաձայնել են զրահաբաճկոնների ու սաղավարտների պակասի մասին: Այս բացը փորձել են լրացնել լրագրողական կազմակերպությունները: Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի տնօրեն Նունե Սարգսյանն ընդգծում է, որ իրենք դեռևս 2016 թվականից ձեռք բերած 18 հատ զրահաբաճկոններ ու սաղավարտներ ունեին, բայց դա, անշուշտ, բավարար չէր (Մկրտչյան, 2021):

Ամբողջ պատերազմի ընթացքում առանձնահատուկ ուշադրության էր արժանանում և իր օբյեկտիվությամբ աչքի ընկնում Պաշտպանության նախարարության «Զինուժ» ծրագիրը, որի երիտասարդ լրագրողները, օպերատորներն ու նկարահանող խմբի մյուս անդամները, իրենց կյանքը վտանգելով, մարտական գործողությունների ամենաթեժ կետերից ռեպորտաժներ

էին պատրաստում՝ բարձրացնելով հասարակության մարտական ոգին: Անհրաժեշտ է ընդգծել, որ որքան մեծ էր հիասթափությունն ու զայրույթը պետական քարոզչությունն իրականացրած բոլոր կառույցների և անհատների նկատմամբ, այնքան մեծ էր հասարակության հարգանքն ու ըմբռնումը «Զինուժ»-ի նկատմամբ:

Այս իրական պատմություններով ամբողջանում է այն պատասխանատու և վտանգավոր, բայց խիստ կարևոր գործը, որ անում են ռազմական լրագողները, որոնք կանգնած են այնպիսի բարդ երկընտրանքի առջև, որ կապված է լինել-չլինելու, ասել՝ խուճապ առաջացնելու, թե չասել՝ զգոնությունը բթացնելու հետ:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում մեզ անհրաժեշտ են պրոֆեսիոնալ ռազմական լրագրողներ, որոնք պետք է պատրաստվեն համապատասխան ֆակուլտետներում: Հրամայական խնդիր է բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում ներմուծել հիմնախնդիրը դիտարկող և կարգավորող առարկայախմբեր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմնախնդրի քննարկումից ակնհայտ է դառնում, որ՝

1. անհրաժեշտ է ինստիտուցիոնալ հիմքերի վրա դնել ռազմական լրագրողների պատրստման գործընթացը, մշակել «Ռազմական լրագրություն» ՄԿԾ մի քանի բաղադրիչներով և պատրաստել կոմպետենտ ռազմական լրագրողներ, սկզբնական շրջանում գոնե մագիստրոսական աստիճանում:
2. Անհրաժեշտ է, որ «Լրագրություն» ՄԿԾ իրականացնող բուհերը ոչ միայն մագիստրոսական աստիճանում, այլև բակալավրիատում ընդգրկեն արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողի հոգեբանությանը՝ իմացական գործընթացներին, հոգեվիճակներին, հակազդումներին, վարքագծի առանձնահատկություններին վերաբերող դասընթացներ, որոնց արդյունքում ապագա լրագրող մասնագետները պատրաստ կլինեն մեր տարածաշրջանին խիստ հատուկ արտակարգ իրավիճակներում աշխատելու, կունենան համապատասխան գիտելիք, կարողություններ ու հմտություններ: Արդյունքում որոշակիորեն կնվազեցվեն մասնագիտական տրավմաների ռիսկերը, կտիրապետեն հույզերի կառավարման, ինքնադրսևորման կարողություններին, բարձր կլինի սթրեսակայունության մակարդակը:

3. «Լրագրություն» ՄԿԾ-ով ուսումնառողների համար անհրաժեշտ է կազմակերպել լրացուցիչ վերապատրսատման կուրսեր և՛ ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանում, որտեղ կուսումնասիրեն ռազմագիտական առարկայախմբի անհրաժեշտ դասընթացներ, և՛ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում, որտեղ կիրականացվի ապագա լրագրողների հոգեբանական պատրաստության գործընթացը:

4. Կարևոր է, որպեսզի ռազմական և արտակարգ իրավիճակներում լրագրողական հանրույթի գործունեությունը դիտվի նաև որպես տեղեկատվական, հոգեբանական պատերազմի իրականացման շատ կարևոր բաղադրիչ և համապատասխան քայլեր իրականացվեն այն գրագետ ու նպատակաուղղված իրականացնելու համար:

5. Անհրաժեշտ է ձևավորել պրոֆեսիոնալ, փորձառու լրագրողների արագ արձագանքման խմբեր, որոնք պատերազմական իրավիճակներում իրենց վրա կվերցնեն թեժ գոտիներում աշխատելու պատասխանատու և վտանգավոր գործը: Այդ խմբերը պետք է ունենան անվտանգության համար անհրաժեշտ բոլոր պարագաները՝ զրահաբաճկոնից, սաղավարտից մինչև փաստաթղթային և օրենսդրական կարգավորումներ, կյանքի և առողջության ապահովագրություն և այլն:

6. Հասարակության մեդիագրագիտության բարձրացմանն ուղղված համալիր միջոցառումները կարող են նվազեցնել թիկունքում պատերազմական գործողությունների հետևանքների բացասական ռիսկերը, կօգնեն կառավարելի դարձնել հասարակական տրամադրությունները, հասարակությանը հնարավոր կլինի զերծ պահել կեղծ և պառակտիչ տեղեկատվական հոսքերից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ուղեցույց պատերազմի, զինված բախումների և ներքին հակամարտությունների ժամանակ լրագրողների ու լրատվամիջոցների վարքի Հայաստանի զանգվածային լրատվության միջոցների էթիկայի. (2021). https://ypc.am/wpcontent/uploads/2021/07/Guidelines_Conflicts_Supplemented_ar

m.pdf?fbclid=IwAR3kYTII_6rRRIxIpbV5fsyL3cidd_8I93pMiNp6iJyj0F0abA3kXYBLKcM

Մկրտչյան Գ. (2021). Զրահաբաճկոնը փրկություն չէ՞ր՝ լրագրողների աշխատանքը պատերազմի օրերին. *Jam News*. https://www.aniarc.am/2021/01/10/10-01-2021

Бартош А.А. (2022). Законы и принципы гибридной войны. *Военная Мысль*, *10*. https://vm.ric.mil.ru/Stati/item/441390

Кочарян М. (2020). Армения стоит на рубеже зарождающего неоосманизма и христианского мира. *Armenian Museum of Moscow and Culture of Nations*. https://www.armmuseum.ru/news-blog/jurnalistov-perevezut-v-erevan-iz-shushi

Панарин И.Н. (2022). *Гибридная война и геополитика*. Горячая линия-Телеком, Москва.

Fridman O. (2018). *The Birth of Hybrid Warfare*. https://doi.org/10.1093/oso/9780190877378.003.0003

Mikael W., Niklas N. (2021). *Hybrid Warfare: Security and Asymmetric Conflict in International Relations* (Vol. 1). Tauris, London.

Radin A. (2017). *Hybrid Warfare in the Baltics: Threats and Potential Responses*. Santa Monica, CA.

Ralph T. (Ed.). (2021). *Hybrid Warfare: Future and Technologies*. Wiesbaden: Springer Fachmedien Wiesbaden.

REFERENCE LIST

Rukovodstvo po povedeniyu zhurnalistov i SMI vo vremya vojny, vooruzhennyh konfliktov i vnutrennih konfliktov, etika SMI v Armenii (*Guide to the conduct of journalists and media during war, armed conflicts and internal conflicts, the ethics of mass media in Armenia*).(2021). https://ypc.am/wpcontent/uploads/2021/07/Guidelines_Conflicts_Supplemented_arm.pdf?fbclid=IwAR3kYTII_6rRRIxIpbV5fsyL3cidd_8I93pMiNp6iJyj0F0abA3kXYBLKcM

Mkrtchyan G. (2021). Razve spaseniem ne byl bronezhilet - rabota zhurnalistov vo vremya vojny? *(Wasn't the bulletproof vest a lifesaver - the work of journalists*

during the war?). Dzhem Novosti. https://www.aniarc.am/2021/01/10/10-01-2021

Bartosh A.A. (2022). Zakony i principy gibridnoj vojny *(Laws and principles of hybrid warfare)*. Voennaya Mysl', 10. https://vm.ric.mil.ru/Stati/item/441390

Kocharyan M. (2020). Armeniya stoit na rubezhe zarozhdayushchego neoosmanizma i hristianskogo mira *(Armenia stands on the border of nascent neo-Ottomanism and the Christian world)*. Armenian Museum of Moscow and Culture of Nations. https://www.armmuseum.ru/news-blog/jurnalistov-perevezut-v-erevan-iz-shushi

Panarin I.N. (2022). Gibridnaya vojna i geopolitika *(Hybrid war and geopolitics)*. Goryachaya liniya-Telekom, Moskva.

Fridman O. (2018). *The Birth of Hybrid Warfare*. https://doi.org/10.1093/oso/9780190877378.003.0003

Mikael W., Niklas N. (2021). *Hybrid Warfare: Security and Asymmetric Conflict in International Relations* (Vol. 1). Tauris, London.

Radin A. (2017). *Hybrid Warfare in the Baltics: Threats and Potential Responses*. Santa Monica, CA.

Ralph T. (Ed.). (2021). *Hybrid Warfare: Future and Technologies*. Wiesbaden: Springer Fachmedien Wiesbaden.

РЕЗЮМЕ

ПРОБЛЕМА ПОДГОТОВКИ И ПЕРЕПОДГОТОВКИ ВОЕННЫХ ЖУРАЛИСТОВ С ПСИХОЛОГИЧЕСКОЙ И МЕТОДИЧЕСКОЙ ГОТОВНОСТЬЮ В РЕПУБЛИКЕ АРМЕНИЯ

ДИАНА МАРКОСЯН

Основная цель статьи – выявить особенности профессиональной деятельности журналиста в военной ситуации и зоне боевых действий и выработать гарантии, направленные на снижение рисков. Представлены особенности профессиональной деятельности журналистов в условиях современных войн, в частности Арцахской, и во время войны, развязанной Азербайджаном против Армении в 2020 году, изменения в требованиях, предъявляемых к журналистам в

сравнении с апрельскими событиями 2016 года. Разработанные нами рекомендации по снижению рисков в работе журналиста в военной ситуации и зоне боевых действий основаны на анализе опыта профессионалов, работавших журналистами во время войны.

В статье говорится о важности информационного иммунитета стран во время внешней агрессии в условиях гибридной войны, одной из главных составляющих которого является ответственность средств массовой информации и скоординированная деятельность с доверенными и компетентными органами политической власти.

Второй важный фактор – доверие общества к власти, в том числе четвертой, отсутствие которого может привести к поиску информации в других источниках, в результате – к реальной опасности оказаться в тисках враждебной пропаганды.

Ключевые слова: военный журналист, гибридная война, психологическая готовность, информационная атака, информационная безопасность, информационные потоки, пропаганда, меры безопасности.

ABSTRACT

ISSUES IN TRAINING AND RE-TRAINING OF MILITARY JOURNALISTS WITH PSYCHOLOGICAL AND METHODOLOGICAL PREPARATION IN ARMENIA

DIANA MARKOSYAN

The purpose of the article is to reveal peculiarities of professional missions of journalists working in times of armed conflictand in border zones and to develop guidance on the risk measures. We have presented characteristics of professional activity of journalists during modern wars, in particular during the war unleashed by Azerbaijan against Artsakh and Armenia in September 2020, as well as changes in the requirements for journalists compared to April 2016. Steps and measures have been developed to mitigate and minimize risks for journalists working in areas of armed conflict and in border zones are based on the analysis of professional practice and experience of media professionals working in wartime.

The article refers to the importance of information immunity of countries in times of external aggression under conditions of hybrid warfare, one of the main components of which is the responsibility of the media and their coordinated activity with the reliable and relevant bodies of political power.

The second important factor is public trust in government, including the 4th branch of government the lack of which can lead to search for other sources of information, thereby creating a real danger of being caught up in the clutches of enemy propaganda.

Keywords: military journalist, hybrid war, psychological preparation, information attack, information security, information flow, propaganda, security measures.

Հոդվածը ստացվել է՝ 09.01.2023թ.

Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 10.01.2023թ.

Հոդվածը երաշխավորվել է հրատարակման՝ 15.02.2023թ.